ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» հոկտեմբերի 2017 թվականի N 207-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳԻՆ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ 2017 թվականի սեպտեմբերի 26-ին Ջրվեժի համայնքապետարանում կայացած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդում հաղթած անձիք 10 օրվա ընթացքում ամբողջությամբ չեն մուծել սակարկությունների արդյունքում ձևավորված գինը, ***որոշում եմ.***

1. Հաղթող ճանաչել սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գին առաջարկած անձանց և աճուրդային վաճառքի հաղթողներին տրամադրել հողամասեր, համաձայն NN 1-2 հավելվածների:

2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին՝ սահմանված ժամկետում ապահովել սույն որոշմամբ աճուրդում հաղթող (գնորդ) ճանաչված անձանց կողմից վճարման ենթակա գումարների ամբողջությամբ մուծումը (փոխանցումը) Ջրվեժ համայնքի 900105228176 հաշվարկային հաշվին:

3. Լիազորել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանին՝ աճուրդով գնված հողամասերի վճարման ենթակա գումարների (սահմանված ժամկետում ու կարգով) վճարումը կատարելուց հետո, աճուրդում հաղթողներին ապահովել հողամասի հատակագծով, նշահարման ակտով և կնքել հողամասերի օտարման պայմանագրեր:

4. Ընդունել ի գիտություն, որ հողամասերի օտարման պայմանագրերը ենթակա են նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 9
գ. Ջրվեժ

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2017 թվականի
հոկտեմբերի 9-ի N 207-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1.Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝ Սրապ Ալիդայի Պետրոսյան, անձնագիր 002877926, տրված 2015 թվականի ապրիլի 28-ին 005-ի կողմից, հասցեն՝ Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 12 տուն:

2. Գնորդը մուծել է մասնակցության վճար 10 000 դրամ 900105228119 հ/հ, անդորրագիր N 000337, մուծված 2017 թվականի սեպտեմբերի 23-ին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝

բնակելի տան կառուցման համար, գյուղ Ջրվեժ, 34-րդ փողոց, թիվ 16:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝

07-057-962-002; 7; 739,0 քառ.մ; 3 325 500 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի երկրորդ առավելագույն (վաճառքի) գինը՝ 3 325 500 դրամ, որը ենթակա է վճարման ամբողջությամբ:

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2017 թվականի
հոկտեմբերի 9-ի N 207-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՂԻ (ԳՆՈՐԴԻ)

1.Գնորդի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, (իրավաբանական անձի անվանումը), հասցեն՝ Միսակ Աշոտիկի Քերոբյան, անձնագիր 001919257, տրված 2014 թվականի ապրիլի 22-ին 099-ի կողմից, հասցեն՝ Կոտայքի մարզ, գյուղ Ջրվեժ, 6-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 17 տուն:

2. Գնորդը մուծել է մասնակցության վճար 10 000 դրամ 900105228119 հ/հ, անդորրագիր N 000339, մուծված 2017 թվականի սեպտեմբերի 23-ին:

3. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն՝
բնակելի տան կառուցման համար, գյուղ Ջրվեժ, 36-րդ փողոց, թիվ 6:

4. Վաճառվող հողամասի ծածկագիրը, լոտի համարը, մակերեսը, մեկնարկային գինը՝
07-057-936-014; 10; 1000,0 քառ.մ; 4 500 000 դրամ:

5. Գնորդի կողմից աճուրդում առաջարկված հողամասի երկրորդ առավելագույն (վաճառքի) գինը՝ 4 500 000 դրամ, որը ենթակա է վճարման ամբողջությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հոկտեմբերի 2017 թվականի N 208-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

Անահիտ Ալբերտի Ղալթախչյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 43-րդ փողոցի թիվ 11 հասցեի տնամերձ հողակտորում տալ Φ=25 սմ տրամագծով, L=66 գծմ երկարության ջրագծի կառուցման շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 10
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հոկտեմբերի 2017 թվականի N 209-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Կարեն Մաիլեստի Մելիքյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 14-րդ փողոցի թիվ 12/1 հասցեի տնամերձ հողակտորում ձեղնահարկով մեկ հարկանի բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 11
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2017 թվականի N 210-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Սյուզաննա Ռուբենի Շախկյանի դիմումը՝ Ջրվեժի 16-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 8 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման 964,72 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում իր կողմից ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 181,83 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 160,3 քառ.մետր) շինությունները՝ բնակելի տունը, կիսանկուղը, օժանդակ շինությունը և ծածկերը իրեն օտարելու մասին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35 և 35.1-րդ կետերով, ***որոշում եմ.***

1.Համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժի 16-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 8 հասցեում գտնվող բնակավայրի բնակելի կառուցապատման 964,72 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 181,83 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսով շինությունները՝ բնակելի տունը, կիսանկուղը, օժանդակ շինությունը և ծածկերն օտարել կառույցն իրականացրած Սյուզաննա Ռուբենի Շախկյանին:

2. Պարտավորեցնել Սյուզաննա Ռուբենի Շախկյանին՝ մուծելու հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 4 364 394 (չորս միլիոն երեք հարյուր վաթսունչորս հազար երեք հարյուր իննսունչորս), շինությունների վաճառքի արժեքը՝ 1 298 024 (մեկ միլիոն երկու հարյուր իննսունութ հազար քսանչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Լիազորել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանին՝ ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարների վճարումից հետո 10-օրյա ժամկետում գնորդի հետ կնքելու անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

4. Ընդունել ի գիտություն, որ գույքի օտարման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հոկտեմբերի 2017 թվականի N 211-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացիներ Անի Ադամյանի, Արսեն Մկրտչյանի, Արամ Հարությունյանի և Վարդան Առաքելյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

Անի Ադամյանին, Արսեն Մկրտչյանին, Արամ Հարությունյանին և Վարդան Առաքելյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 46-րդ փողոցի թիվ 58-62 հասցեից բաժանված մաս 1՝ 749,43 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 46-րդ փողոց, թիվ 58, մաս 2՝ 749,43 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 46-րդ փողոց, թիվ 60, մաս 3՝ 749,49 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 46-րդ փողոց, թիվ 62, մաս 4՝ 749,43 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 46-րդ փողոց, թիվ 62/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 12
գ. Ջրվեժ